ԿՐՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ԿՈԳՆԻՏԻՎ, ՀՈՒԶԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ

Սարգսյան Դ. Յու.(Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

dianasargsyan@ysu.am

Խաչիկյան Ս. Ս.(Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

sona.khachikyan@inbox.ru

Ներկայացման ամս. 05.03.2021

Գրախոսման ամս. 20.04.2021

Տպագրության ընդունման ամս. 30.04.2021

Հոդվածում քննարկվում է անձի կառուցվածքային համակարգում կրոնի ունեցած ազդեցությունը՝ կախված կրոնական հավատի առանձնահատկություններից, գերբնականին տրված բնորոշումներից, անձի սեռատարիքային առանձնահատկություններից և ճգնաժամային իրավիճակներից: Ինչպես նաև ներկայացված են կրոններում կիրառվող ներազդման մեխանիզմների հոգեբանական մեկնաբանությունները: Հոդվածի նպատակն է հոգեբանական ներգործության տեսանկյունից վերլուծել կրոնի դերակատարումը ժամանակակից անձի կոգնիտիվ, վարքային և հուզական բաղադրիչներում: Վերլուծության արդյունքում դուրս ենք բերել անձի ձևավորման վրա կրոնի ազդեցության մի քանի դրույթներ, որոնք ներկայիս փոխակերպվող հասարակությունում և մարդկության զարգացման համար բարդ ժամանակաշրջանում կարիք ունեն վերստին ուսումնասիրվելու: Այդ դրույթներից մեկն այն է, որ արժեքային դիրքորոշումները գլխավոր դերն են կատարում վարքաձևի ընտրության հարցում և պայմանավորում են անձնային գործունեության ակտիվության մակարդակը, իսկ կրոնական աշխարհայացքը որոշ դեպքերում վեր է աճում անձնային ինքնության և նույնականացման մակարդակից, այն ունակ է դառնալ ընդհուպ ազգային ինքնության ցուցիչ:

DOI: *https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.110*

Հանգուցային բառեր. *անձ, կրոն, կրոնական հավատ, կրոնական հույզ գերբանական, «կրոնական փորձ»:*

Ժամանակակից հոգեբանության բազմաթիվ տեսություններում, որոնք հիմնականում ձևավորվել են 2-րդ համաշխարհային պատերազմից հետո, քննարկվում է կրոնի ազդեցության ներքո անձի ձևավորման մեխանիզմների հարցը: Հետպատերազմյան գիտական քաղաքականությունը անընդհատ

պտտվում է հումանիզմի փիլիսոփայության շուրջ, ինչն իր կայուն տեղը գտավ նաև հոգեբանության գիտակարգում: Չնայած 20-րդ դարի երկրորդ կեսից զարգացում ապրող ռեալիզմը և աթեիզմը իրենց տարածումն են գտել առաջատար և զարգացող երկրներում, այնուամենայնիվ կրոնն ազդեցություն ունի անձի կառուցվածքային տարրերի ձևավորման վրա: Եվ քանի որ ժամանակակից մարդու կյանքում հասարակական տեղաշարժերը շատ ավելի արագ են ընթանում, ուստի անձի ժամանակակից տեսությունների նորովի վերլուծության առիթ կա, հատկապես «կրոն և անձ» փոխկապակցվածությունն ավելի լավ հասկանալու համար:

Հոգեբանությունը կրոնը ընդունում է որպես գոյություն ունեցող սոցիալական երևույթ, բնավ չկարևորելով բուն կրոնի առարկայի՝ գերբնականի իրական լինելիությունը կամ անգոյությունը: Ուստի՝ հոգեբանության տեսանկյունից անձի կրոնականությունը կամ անկրոնությունը արդեն իսկ դիրքորոշում-աշխարհայացքային հիմք են՝ ուղղորդող գործոններ, մարդու կենսագործունեության, կենսակերպի, կենսազգայության և կենսամտածողության համար: Ինչպես գիտենք անձը յուրաքանչյուր պետության հիմնաքարն ու շարժիչ ուժն է: Եվ ինչպես անձի, այնպես էլ պետության շարժը երբեք կանգ չի առնում, բայց ուղղությունը կարող է փոփոխվել՝ առաջընթաց կամ հետընթաց գրանցելով: Եվ քանի որ ցանկացած շարունակական հետընթացը անխուսափելիորեն հանգեցնում է վախճանի, և եթե պետությունները գտնվում են այդ ճանապարհին, ապա սա խոսում է հասարակության անձնապես անառողջ լինելու մասին: Ապա, այս ծանրագույն ժամանակներում առաջնահերթ է դառնում գտնել այնպիսի լծակներ, որոնք կուղղորդեն և հնարավորություն կտան առանձին-առանձին և հավաքականորեն «բուժել» անձն ու հասարակությունը: Առողջ և անվտանգ հասարակությունները ձևավորվում են սոցիալական ներգործությունների արդյունքում, իսկ կրոնը հենց ներազդման մեխանիզմների համակարգ է: Ուստի այս աշխատանքի նպատակն է վեր հանել այդ ազդեցությունների օրինաչափություններն ու հասկանալ ինչքանով են դրանք նպաստավոր անձի և հասարակության վերակենդանացման համար:

Իր գործառույթները կրոնը իրականացնում է ի հաշիվ իր արժեհամակարգային ուսուցանող մի շարք ներգործական մեխանիզմների՝ քարոզչություն, ծիսակարգային արարողություններ, կրոնական կառույցներ, կրոնական համայնքներ և այլն: Ընդհանուր առմամբ կրոնը սահմանվում է որպես «…հայացքների և համոզմունքների համակարգ, որոնց վրա կառուցվում է աշխարհընկալումն ու աշխարհայացքը, ինչպես նաև համապատասխան վարքագիծն ու յուրահատուկ գործողությունները (կուլտ), և որոնք հիմնված են Աստծո կամ Աստվածների գոյության, «սրբազանի», այսինքն՝ գերբնականի այս կամ այն տեսակին հավատալու վրա» [3, էջ 12]: Վերոնշյալ մտքերը խոսում են այն մասին, որ կրոնը ազդում է անձի հուզական, կոգնիտիվ և վարքաբանական բաղադրիչների վրա: Կրոնի՝ այլ սոցիալական ազդեցություններից տարբերող

գործոնը հենց գերբնականի հանդեպ հավատի մեջ է: Ինչպես նշում է Ու. Ջեմսը, կրոնական սերը ընդամենը բոլոր մարդկանց բնորոշ սիրո զգացողությունն է՝ ուղղված կրոնական օբյեկտին, իսկ կրոնական վախը մարդկային սրտի սովորական թրթիռն է, բայց կապված աստվածային պատժի գաղափարի հետ [2, էջ 25]: Բացի սա կրոնական հավատը տարբերվում է անորոշ, ճգնաժամային պահերին ի հայտ գալու հատկությամբ, քանի որ չի պահանջում պարտադիր ապացուցողականությունը [3,8]: Սա կարևոր հոգեբանական նշանակություն ունի մարդու՝ անհայտ և վախեցնող իրականության մեջ կողմնորոշվելու հարցում. թույլ է տալիս անելանելի կամ քիչ տեղեկատվության պայմաններում բացատրել հնարավոր ելքերը առավելագույնս դրական կողմնորոշմամբ: Այսինքն՝ իջեցնում է կենցաղային սթրեսի և տագնապայնության մակարդակը: Անդրադառնանք վերոնշյալ մտքերում բաց թողնված հանգուցային կետին՝ հույզերին: Յուրաքանչյուր ընկալում հասանելի է դառնում որպես գիտակցում միայն գնահատման ճանապարհով, իսկ գնահատումը կատարվում է հուզական երանգավորման ներքո: Այսպես, եթե մենք իրավիճակը գնահատում ենք որպես դրական և անվտանգ, ապա ձգտում ենք պահպանել այն, ավելի մոտենալ, իսկ եթե գնահատում ենք բացասական և վտանգավոր, փորձում ենք խուսափել կամ ներազդել դրա վրա այնպես, որ ելքը լինի ի նպաստ մեզ: Սրա հիման վրա կրոնի խնդիրն է դառնում մարդու համար հզոր հուզական ներզգացողության ձևավորումը, որը անքակտելիորեն կպայմանավորի մարդու կանխատեսելի վարքը կրոնական բովանդակությանը համապատասխան (կանոնների կոնկրետ համակարգի բնույթը, որը մարդուն դնում է խիստ ընդգծված շրջանակում և դրա հետ մեկտեղ ուժեղ հուզական ներգործություն է կրում ի մեջ, մեծ հաշվով հիմք են դարձել Ֆրեյդի այն գաղափարին, որը կրոնը համընդհանուր նևրոզ է): Ինչպես նաև, երբ նշում ենք կրոնի ազդեցությունը անձի հուզական բաղադրիչի վրա, մեր հայացքը անխախտելիորեն մի կողմից պիտի փնտրի փոփոխությունն առաջ բերող գերբնականին տրվող որակումները, մյուս կողմից գերբնականի սահմանած կանոնների հոգեբանական ֆունկցիոնալությունը: Մասնավորապես՝ գերբնականի հանդեպ դիրքորոշումներն ունեն բացարձակ պոզիտիվիստական բնույթ, այն իմաստով, որ գերբնականին վերագրվում են ծնողական հոգատարության, ներգրավվածության, բարեգթություն, մարդասիրություն և նման մի շարք հատկանիշներ: Հիշենք շատ հայտնի օրինակ «ընկնող ինքնաթիռում անհավատներ չկան»: Խոսքն այն մասին է, որ ճգնաժամային իրավիճակներում անձը սթրեսածին գործոնների ազդեցության տակ ռեգրես է ապրում այն աստիճան, որ հասնում է մանկություն և փրկությունը գտնում է իրեն անվերապահ սիրող, պաշտպանող ու ապրեցնող ծնողի մեջ: Առօրյայում, առաջնորդվելով վերոնշյալ պատկերացումներով, մարդու մոտ տրամաբանորեն իջնում է տագնապայնությունը և աշխարհը դառնում է պակաս սարսափելի, ինչի արդյունքում անձը ավելի բաց է դառնում աշխարհի նկատմամբ:

Կրոնները ստեղծում են շատ մեծ թվով կերպարներ, որոնք միշտ պատրաստ են լսել և հասկանալ այն, ինչ առանձի անհատի մակրո և միկրո միջավայրի համար անհասկանալի կամ անընդունելի է: Այս իմաստով կրոնը հուզական ապրումակցման մեծ ռեզերվ է և ունի թերապևտիկ նշանակություն: Միևնույն ժամանակ պահապանվում է հնարավորություն «բանակցելու» գերբանականի հետ հենց իր սահմանած կանոնների միջոցով: Արդյունքում մարդուն հնարավորություն է տրվում ազատվել պատժվելու վախից և դեռ ավելին, վախը վերափոխվում է ինքնակատարելագործման հնարավորության ցանկության: Այսինքն՝ հոգուն հնարավորություն է տրվում տրանսմուտացվել (լատ. trans-միջով, mutation-փոփոխություն)՝ ենթարկվել որակական փոփոխության, որն էլ անձի զարգացման համար հեղափոխական նշանակություն ունի: Կրոնը հնարավորություն է տալիս հուզական պարպման, բացասական հույզերի փոխակերպման դրականների, կատարսիսի [6]: Այս ամբողջը իրագործվում են ծիսական արարողակարգերում ամենատարբեր կերպ և ընդհանրական անվանվում է «կրոնական փորձ» [2]: «Կրոնական փորձը» անհատի յուրահատուկ վիճակի հասնելու սեանս է, որը տեղի է ունենում անհատական ներշնչանքի կամ ներշնչանքի մասսայական վարակի միջոցով: Հիմքը դարձյալ կրոնական հավատն է առ կրոնական օբյեկտի կարծրատիպային պատկերացումները: Հիմնական տեխնիկաները ունեն մեդիտատիվ բնույթ, օրինակ աղոթքը կամ խոստովանությունը, որոնց շնորհիվ հասնում են մաքրման զգացողության, ինսայթի և բացասական հույզերը փոխարինում են դրականներով: Սրանք իհարկե դրական կողմեր են, որոնք նպաստում են անձի հուզական ինքնակարգավորման մեխանիզմների զարգացմանը, սակայն կան նաև հակառակ ազդեցության տեղեր: Դրանք հիմնականում խիստ դոգմատիկացված հայացքների հետևանքներ են, որոնք Մարքսը տիպիկ բնութագրում է «կրոնը ժողովրդական ափիոն է» [4, էջ 451] արտահայտությամբ, այն պարագայում, երբ մարդիկ տրվում են զգացական և կույր հավատին ու կտրվում իրականությունից՝ վստահելով միայն գերբնական գոյի փրկությանը: Այս կողմից մարդը ամբողջովին կլանում է ընդունված «թույլատրելի, ճիշտ» հույզերը և մերժում «անթույլատրելիներ», արդյունքում կորցնում իր ներքին, կոմպլիմենտար հուզական ազդակները, որոնք անպայմանորեն հանգեցնում են լուրջ բացասական ֆոնի, ինչն էլ բարդացնում է անձի արդյունավետ գործունեությունը բոլոր ոլորտներում:

Մարդն իր կենսագործունեությունը կազմակերպելու համար ստիպված է հարաբերվել աշխարհի հետ, ինչի համար նրան անհրաժեշտ են կառուցվածքավորված գիտելիքներ: Կառուցվածքավորված գիտելիքները ձևավորվում են համակարգերում: Այսօր աշխարհաճանաչողական գիտելիքները ձեռք են բերվում երկու մեծ հիմնական համակարգերի միջոցով՝ գիտական և կրոնական: Առաջինը միշտ և բոլորին չէ, որ հասանելի է, այդ պատճառով կիրառական անհնարինություն է առաջանում, ինչպես նաև, գիտական կոնտեքստում մար-

դը ավելի սահմանափակ տեղ է զբաղեցնում: Իսկ երկրորդ դեպքում ճանաչողությունը հասարակության բոլոր շերտերի համար տրված է ավելի հասանելի: Հետևաբար ավելի հեշտ է գրավում մարդկանց և տարածքներ: Կրոնը իր մեջ կրում է հայեցակարգեր, որոնք յուրահատուկ տեսանկյունից մեկնաբանում են օբյեկտիվ աշխարհը, սահմանում են յուրաքանչյուրի տեղն ու դերը, իմաստավորում գոյությունը և կառավարում ու կանոնակարգում հարաբերությունները: Կարելի է դրա բովանդակությունը մեկնաբանել, որպես օբյեկտիվ աշխարհի մասին ընդհանրականացված սուբյեկտիվ ընկալումներ: Այն ամփոփվում է ուղղակի՝ դոգմատիզացված դիրքորոշումներում, այսինքն՝ ուղիղ ասում է ինչն է «լավ», ինչն է «վատ» կամ անուղղակի՝ առակներում, պատումներում և այլն: Կարելի է առանձնացել կրոնում տրված մոտեցումների անվերապահ ընդունմանը հակված թիրախային հետևյալ խմբերը՝ երեխաներ, ծերեր, ցածր կրթական մակարդակ ունեցող խավ, խոր ճգնաժամային իրավիճակում հայտնվածներ: Երեխաների և ծերերի մոտ այս հանգամանքը կարող է ունենալ նաև ֆիզիոլոգիական բնույթ՝ առաջինների մոտ՝ պայմանավորված հարճակատային կեղևի դեռևս թույլ զարգացմամբ, իսկ ծերերի մոտ՝ այդ հատվածի հետընթացով: Ուղեղի այս հատվածը համապատասխանում է երրորդ գործառնական բլոկին, որը կարգավորում է գիտակցված հոգեկան գործունեությունը [1], պայմանավորում է վերացական, քննադատական մտածողության ակտերը: Հետևաբար երեխաները ունակ չլինելով ամբողջությամբ իրագործել այդ ակտերը, ավելի ներշնչվողական են, ինչը զուգորդվում է դեռևս թույլ տարբերակված հուզական գիտակցման հետ և ձևավորում ամուր անգիտակցական խորքային դիրքորոշում: Իսկ ծերերի մոտ նյարդահոգեկան գործընթացների թուլացումը և մահվան էքզիստենցիալ վախի սրացումը նպաստում են վերոնշյալ դիրքորոշումների հանդեպ անվերապահ հավատի ձևավորմանը՝ «հարատև» կյանքի հասնելու համար: Նաև սրանով է պայմանավորվում մեծ թվով ծերերի առկայությունը աղանդավորական խմբերում: Ընդ որում, հուզական ինտենսիվության ֆիզիոլոգիական հիմքերով պայմանավորված՝ տղամարդկանց թվի նկատելի տարբերություն է դիտարկվում: Վերջին մտքերը հիմնված են ավելի կենսական փորձի և անձնական դիտման տվյալների վրա: Ցածր կրթական մակարդակը մարդկանց համար սահմանափակում է աշխարհի մասին ավելի հավաստի և տրամաբանական բացատրությունների առկայությունը, և ստիպում նրանց դրանք փնտրել ալտերնատիվներում: Այս պարագայում՝ կրոնում:

Կրոնը մարդուն տալիս է ոչ միայն ինքն իր մասին ունեցած պատկերացումները, այլև մարդու՝ այլ մարդկանց մասին ընկալումները: Մարդկանց համար հասանելի են դառնում դիմացիններին հասկանալու կարողությունը, և կրոնը այս առումով ձեռք է բերում առօրյա ապրումակցման գործառութային նշանակություն: Սահմանում է հատկանիշներ, որոնք ձեռք բերելով անձը լավագույնս կարող է իրացվել և արդյունավետ համագործակցել, սահմանում է հույզերը, որոնք պիտի զգալ սեփական անձի և դիմացինի հանդեպ: Այս սահ-

մանումները կարող են ունենալ ինչպես վալիդիզացնող նշանակություն, այնպես էլ լինել սուր ինվալիդիզացիայի հիմք՝ կախված անձի կյանքում ինքնուրույնության մակարդակից: Այդ դիրքորոշումները և դրանց հանդեպ անվերապահ ու բացարձակ ընկալումները ապահովվում են պատժի և խրախուսանքի անմիջական՝ հասարակության կողմից վերաբերմունքի կամ կրոնական առաջնորդների կողմից սահմանափակումների տեսքով և միջնորդավորված՝ այլ աշխարհում տեղի դիրքի և հնարավորությունների տրմամբ: Արդյունքում նման համակարգը զուգակցվելով «կրոնական փորձի», երբեմն «ինքնահրականացող նախախնամությունների» հետ, ժամանակի ընթացքում վեր են ածվում արժեքային և աշխարհայացքային կողմնորոշման: Բացի սա կրոնը վերմարդկային իմաստի աղբյուր է, որի շրջանակներում յուրաքանչյուրը պետք է փնտրի իր դերը: Այս իմաստով մարդիկ դարձյալ նվազեցնում են անորոշությունից առաջացող տագնապը իրենց վերագրելով շղթայի մի մասնիկ լինելը՝ միևնույն ժամանակ տարրալուծելով անձնական իմաստային որոշակիություն ընդհանուրի՝ վերմարդկայինի մեջ: Ֆրանկլը նշում է, որ իմաստը ի սկզբանե չի կարող անհատականապես տրված լինել, բայց կարող է հայտնաբերվել գործունեության իրացման արդյունքում: Եվ կրոնը այս պարագայում իդեալական նախահիմք է դառնում ժամանակակից իմաստազրկման չարիքի դեմ (Ֆրանկլ, 2012): Այս ամենը ամփոփվում է կրոնական մի շարք օբյեկտների ընդհանրական կերպարներում, որոնք սրբադասվում են իրենց կյանքի ոճի ընտրության արդյունքում: Երբեմն չափազանցված կրոնական հավատի և հայեցակարգային մոտեցումների ոչ լիարժեք իմացությունը կամ դրանց դոգմակարծրատիպացված մոտեցումները հանգեցնում են կենսական պաթոսի և զրկում անձնային կյանքը իրական կենսաձևավորող ոգեղենությունից: Ինչպես հասկանում ենք, արժեքային դիրքորոշումները գլխավոր դերն են կատարում վարքաձևի ընտրության հարցում և պայմանավորում են անձնային գործունեության ակտիվության մակարդակը: Կրոնական աշխարհայացքը որոշ դեպքերում վեր է աճում անձնային ինքնության կողմնորոշման և իդենտիֆիկացիայի, այն ունակ է դառնալ ընդհուպ ազգային ինքնության ցուցիչ: Սա տեղի է ունենում կրոնական քարոզչության հաշվին: Կրոնական մեծ ուղղությունները հիմնականում տանում են տոլերանտության քարոզչություն այլ կրոնական ուղղությունների հանդեպ, սակայն անդադար ֆոնային կողմնորոշմամբ մատնանշելով, որ հենց իրենց ուղղությունն է միասնականության և ապահովության հիմնաքարը [1,5]:

Կրոնի ազդեցությունը անձնային վարքաբանական դրսևորումներում կարող է արտահայտվել բազմակերպ և պայմանավորված մի շարք դետերմինանտներով: Այս կոնտեքստում վարքը կարելի է բաժանել 2 խմբի՝ ծիսակարգային և ոչ ծիսակարգային: Առաջինը պայմանավորված է կրոնական զգացողությունների ինտենսիվությամբ և որի դիրքորոշումային բնույթն ավելի կանոնականացված է: Այն դրսևորվում է անձի ակտիվ կամ պասիվ մասնակ-

ցությամբ կրոնական կյանքին, ծիսակարգերին և համայնքային կյանքին, համայնքի հետ շփվելու հաճախականությամբ: Այդ շփումները լինում են հիմնականում խիստ սահմանափակումներով կամ յուրահատուկ պահանջներով, որոնք թելադրվում են կրոնական աշխարհայացքներով: Ոչ ծիսակարգայինը անձի անձնական վարքաձևերի ընտրությունն է կրոնական համայնքից դուրս: Այստեղ մարդիկ կարող են դրսևորել կրոնականությունը ներքնայնացված արժեքների միջոցով՝ հարաբերությունների հաստատման կողմնորոշիչների պահպանմամբ: Նման արժեքների ինտենսիվության դրսևորումը ենթադրաբար կապվում է թե՛ անմիջական սոցիալ-մշակութային միջավայրային նորմատիվներով, թե՛ ռեֆերենտային միկրոմիջավայրային ստերեոտիպերի և ներքնայնացված փորձի առանձնահատկություններով:

Արդյունքում կարելի է եզրակացնել, որ.

- Կրոնը կյանքը ուղղորդող հզոր գործիք է, և դրա ուղղորդված, վերահսկելի ներմուծումը մարդու կյանք հնարավոր կդարձնի ձևավորել իմաստապես լի, պակաս նևրոտիկացված և առավելագույնս կոլեկտիվացված անձի ձևավորմանը: Ինչպես նաև, կրոնի տարերային առկայությունը մարդու կյանքում կարող է հանգեցնել ինվալիդիզացված անձնային անարդյունավետ գործառման՝ դրանից բխող ամենատարբեր բացասական հետևանքներով:
- Կրոնական դիրքորոշմամբ մարդիկ ավելի բաց են աշխարհի նկատմամբ և ունեն ինքնկարգավորող, ինքնահանգստացնող ամուր մեխանիզմներ ի տարբերությունը ոչ կրոնականների: Այս պարագայում կարելի է ասել, որ այն շատ նպաստավոր է ներկայիս սթրեսային պայմաններում հարմարվելու համար:
- Կրոնական հայացքներով առաջնորդվողների մոտ անձնական ընտրության սահմանները ավելի նեղ են քան ոչ կրոնականների մոտ:

Ինչպես տեսական վերլուծություններից հասկանում ենք, անձի՝ կյանքով բավարարվածությունը կարող է համարվել լիարժեք այն դեպքում, եթե նրա արժեքային համակարգից բխող վարքաձևի ընտրությունը կարողանա համապատասխանել իր ներքին զգացողություններին: Արդյունքում, անձը զերծ կմնա իր ներքին հավանական կոնֆլիկտներից և կկարողանա լիարժեքորեն կենսագործել:

Բացի սա, կրոնը լուծում է մարդու ինքնաճանաչողության և ինքնության բացահայտման, անձական իմաստների հայտնաբերման հարցերը:

Կան տեսական մոտեցումներ կրոնի մասին լայն պատկերացում ունենալու համար, որոնք հիմք են ստեղծում այնպիսի էմպիրիկ ուսումնասիրությունների համար, ինչպիսիք են՝ «կրոնական, ազդեցության ո՞ր չափանիշները կարող են նպաստել քաղաքացիական գիտակցությամբ անձի ձևավորմանը», «ինչպե՞ս պետք է կազմակերպել կրոնական կրթությունը, որը կնպաստի քննադատական և ստեղծագործական մտածողությամբ անձի ձևավորմանը»

և այլն: Այս և մի շարք այլ հարցերի պատասխանները դեռևս մնում են անհայտ:

Գրականություն

1. **Գրիգորյան Վ. Հ.** Հոգեֆիզիոլոգիա - Եր.: ԵՊՀ հրատ. 2014, 2-րդ վերամշակված հրատ., 464 էջ:
2. **Զաքարյան Ս. Ա.** Հայոց ինքնության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու - Պրակ 2. Եր.: 2014, 124 էջ:
3. **Джеймс У**. Многообразие религиозного опыта / У. Джеймс. -М., 1993.
4. **Лобазова О. Ф.** Религиоведение: учебник для академического бакалавриата/ 2-е изд.–Москва: Издательство Юрайт, 2019, 327 с.
5. **Маркс К., Энгельс Ф.** К критике гегелевской философии права // Собр. соч., изд. 2, т. 1.–М.: Политиздат, 1957, 689 с.
6. **Московичи С. М.,** Творящая богов/С. Московичи. - М., 1998
7. **Угринович Д.М.** М.: Психология религии. Политиздат, 1986, 352 с.
8. **Франкл В.** «Человек в поисках смысла» - Биг-Пресс 2012, 204 с.
9. **Яблоков И. Н.:** Религиоведение: Учебное пособие и Учебный словарь-минимум по религиоведению. – М.: Гардарики, 2000, 536 с.

ВЛИЯНИЕ РЕЛИГИИ НА КОГНИТИВНЫЕ, ЭМОЦИОНАЛЬНЫЕ И ПОВЕДЕНЧЕСКИЕ СОСТАВЛЯЮЩИЕ ЛИЧНОСТИ

Саргсян Д. Ю. (ЕГУ, Ереван, Армения)

Хачикян С.С. (ЕГУ, Ереван, Армения)

В статье рассматривается влияние религии в структурной системе личности в зависимости от особенностей религиозной веры, сверхъестественных характеристик, половых особенностей личности и кризисных ситуаций. А также представлены психологические интерпретации применяемых в религиях механизмов воздействия. Цель статьи-с точки зрения психологического воздействия проанализировать роль религии в когнитивных, поведенческих и эмоциональных составляющих современного человека. Одним из этих положений является то, что ценностные установки играют главную роль в выборе поведения и обуславливают уровень активности личностной деятельности, а религиозное мировоззрение в некоторых случаях становится личностной идентичностью и идентификацией, оно способно стать индикатором национальной идентичности.

Ключевые слова: *личность, религия, религиозная вера, религиозная эмоция, сверхъестественный, «религиозный опыт».*

THE INFLUENCE OF RELIGION ON THE COGNITIVE, EMOTIONAL AND BEHAVIORAL COMPONENTS OF A PERSON

Sargsyan D.Yu. (YSU, Yerevan, Armenia)

Khachikyan S. S. (YSU, Yerevan, Armenia)

The article examines the influence of religion in the structural system of the individual, depending on the characteristics of religious faith, supernatural characteristics, sexual characteristics of the individual and crisis situations. Psychological interpretations of the mechanisms of influence used in religions are also presented. The purpose of the article is to analyze the role of religion in the cognitive, behavioral and emotional components of modern man from the point of view of psychological impact., one of these provisions is that value positions play a major role in the choice of behavior and determine the level of activity of personal activity, and the religious worldview in some cases rises above the level of personal identity and identification, it can become an indicator of national identity.

Keywords: *personality, religion, religious faith, religious emotion, supernatural, "religious experience".*